# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ
2026 թ.սեպտեմբերի 3-ի (հարցման կարգով) թիվ 1 նիստի

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ հարցման կարգով նիստ, որի ընթացքում քվեարկության դրվեցին.

1. Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հեռակա ասպիրանտ Մարի Նաիրիի Մխիթարյանի մասնակցությունը (գիտ. ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Դավիթ Պետրոսյան) ԿԳՄՍՆ հայտարարած «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր-2026» մրցույթին երաշխավորելու հարցը:

2. Ժուռնալիստիկայի ֆակուլտետի Ժուռնալիստիկայի պատմության, տեսության ու պրակտիկայի ամբիոնի Ժ.01.06 ժուռնալիստիկա մասնագիտությամբ հեռակա ասպիրանտ Մարի Նաիրիի Մխիթարյանի ատենախոսության վերնագրի՝ «Ավանդույթներ և նորարարություն. ՀՀ առցանց լրատվամիջոցների մոնետիզացիոն գործիքները» ճշգրտման և «Հայաստանի թվային լրատվամիջոցների ֆինանսավորման մոդելներն ու կայունությունը մեդիահամակարգի փոխակերպման պայմաններում» վերնագրով հաստատման հարցը:

3. Ժուռնալիստիկայի ֆակուլտետի անվանական կրթաթոշակների հավակնորդներին հաստատելու հարցը:

Օրակարգի առաջին և երկրորդ հարցերին բոլորը քվեարկել են «կողմ»:
Երրորդ՝ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի անվանական կրթաթոշակների հավակնորդներին հաստատելու հարցի հետ կապված քվեարկության արդյունքները հետևյալն են.

- ✓ Հարություն քահանա Շմավոնյան» կրթաթոշակ- Հանյան Աննա Գևորգի, 3-րդ կուրս- 15 «կողմ»:
- ✓ «Արտաշես Քալանթարյան» կրթաթոշակ- Հաարաթյան Անի Դավիթի, 3-րդ կուրս-14 «կողմ», 1 «ձեռնպահ»
- ✓ «Հովհաննես Աղամյան» կրթաթոշակ- Խանզրատյան Ալբինա Հարությունի, մագ. 1-ին կուրս-15 «կողմ»
- ✓ «Գաբրիել Մոլյեան» կրթաթոշակ- Գևորգայն Անուշ Թելմանի, մագ. 1-ին կուրս- 15 «կողմ»

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u>- Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝

ա) Երաշխավորել Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հեռակա ասպիրանտ Մարի Նաիրիի Մխիթարյանի մասնակցությունը (գիտ. ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Դավիթ Պետրոսյան) ԿԳՄՍՆ հայտարարած «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր-2026» մրցույթին:

բ) Մարի Նաիրիի Մխիթարյանի թեկնածուական ատենախոսության վերնագիրը ճշգրտել և հաստատել «Հայաստանի թվային լրատվամիջոցների ֆինանսավորման մոդելներն ու կայունությունը մեդիահամակարգի փոխակերպման պայմաններում» վերնագրով (Ժ.01.06 Ժուռնալիստիկա մասնագիտությամբ):

գ) Երաշխավորել բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Աննա Գևորգի Հանյանին 2026 թ. սեպտեմբերի 1-ից մինչև ընթացիկ կիսամյակի ավարտը ստանալու «Հարություն քահանա Ծմավոնյան» կրթաթոշակը, բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Դավիթի Հասրաթյանին՝ 2026 թ. սեպտեմբերի 1-ից մինչև ընթացիկ կիսամյակի ավարտը ստանալու «Արտաշես Քալանթարյան» կրթաթոշակը, մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կուրսի ուսանողուհի Ալինա Հարությունի Խանզրատյանին՝ 2026 թ. սեպտեմբերի 1-ից մինչև ընթացիկ կիսամյակի ավարտը ստանալու «Հովհաննես Աղայան» կրթաթոշակը, իսկ մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կուրսի ուսանողուհի Անուշ Թելմանի Գևորգյանին՝ 2026 թ. սեպտեմբերի 1-ից մինչև ընթացիկ կիսամյակի ավարտը ստանալու «Գաբրիել Սոլոյեան» կրթաթոշակը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ